ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024 թ. N ----- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.693-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 70,000,000 (յոթանասուն միլիոն) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 69,998,022 (վաթսունինը միլիոն ինը հարյուր ինսունութ հազար քսաներկու) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 14,394 (տասնչորս հազար երեք հարյուր ինսունչորս) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 4,863 (չորս հազար ութ հարյուր վաթսուներեք) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 688,167,993 (վեց հարյուր ութսունութ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր ինսուներեք) դրամ, որը կազմում է 141,511 (հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր տասնմեկ) հատ 4,863 (չորս հազար ութ հարյուր վաթսուներեք) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Կազմված է ----- --------2024թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակից
Օրինակ --

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2024թ.
N -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

29.12.2003թ.,
գրանցման թիվ 222.120.00256
վկայական 03 Ա 061846
ՀՎՀՀ 02234505

12.05.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
“____”_____ 2024 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

ք. Երևան 2024թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 688,167,993 (վեց հարյուր ութսունութ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր ինսուներեք) ՀՀ դրամ, բաժանված 141,511 (հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր տասնմեկ) (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 4,863 (չորս հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության բոլոր 141,511 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության 12.05.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի հ.693-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2023 թվականի հունվարի 20-ի հ.170-Ա որոշումներով հաստատվել է Երևան քաղաքի 2023թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 70,000.0 հազ. դրամ, որը՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, փաստացի հատկացվել է:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 14,394 հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 4,863 դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 69,998,022 դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ